«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ 4
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ 5
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ 6
ԲԱԺԻՆ 5. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ 6
ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ 7
ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ 8
ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 9
ԲԱԺԻՆ 9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10
ԲԱԺԻՆ 10. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 11
ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ 12
ԲԱԺԻՆ 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ) 12
ԲԱԺԻՆ 13. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ 12
ԲԱԺԻՆ 14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 14

ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1" Սույն «Երաշխիքի տրամադրման կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2" Ապահովագրողի կողմից Երաշխիքի տրամադրումը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Երաշխիքի տրամադրում» դասի մեջ:

1.3" Կանոնները հանդիսանում են Երաշխիքի տրամադրման պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

1.4" Կանոններում նշված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ Պայմանագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում, պայմանով, որ նման փոփոխությունները չեն հակասում օրենսդրությանը և Կանոններին:

1.5" Կանոններում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն Ապահովագրողի խորհրդի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

1.6" Կանոնները հրապարակային փաստաթուղթ է, և տեղադրված է Ապահովագրողի պաշտոնական՝ www.armeniainsurance.am վեբկայքում:

1.7" Կանոնների համաձայն Ապահովագրողը, գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, կնքում է Երաշխիքի տրամադրման պայմանագրեր ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ՝ տրամադրելով երաշխիքներ:

1.8" Կանոնների համաձայն Ապահովագրողն իր համար ընդունելի՝ պարտավորությունների կատարումն ապահովող միջոց(ներ)ից բխող Ապահովագրողի իրավունք(ներ)ի ծագման դեպքում (եթե Ապահովագրողը ներկայացրել է այդպիսի պահանջ)՝ Ապահովադրի (Պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում Պրինցիպալի պարտատիրոջ (Բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, Բենեֆիցիարին (Շահառուին) վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

1.9" Կանոնների համաձայն կարող է տրամադրվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի երաշխիք:

1.10" Երաշխիքը չի կարող հետ կանչվել Ապահովագրողի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով:

1.11" Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:

1.12" Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են՝

• Ապահովագրող կամ Երաշխիք տված անձ՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ,

• Ապահովադիր կամ Պրինցիպալ՝ Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած անձ,

• Շահառու կամ Բենեֆիցիար՝ Պայմանագրում նշված ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը համաձայն ՀՀ օրենսդրության, իրավական ակտերի կամ պայմանագրերի (երաշխիքի պայմանների) ունի ապահովագրական հատուցում (երաշխիքով սահմանված դրամական գումար) ստանալու իրավունք,

• Ապահովագրական գումար՝ Պայմանագրում սահմանված դրամական գումար (երաշխիքի գումար), որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է կատարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում (երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան Շահառուին (Բենեֆիցիարին) վճարել դրամական գումար),

• Ապահովագրավճար՝ Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար (երաշխիք տալու համար վարձատրություն),

• Ապահովագրավճարի հերթական մասի վճարում՝ Ապահովագրավճարի տարաժամկետ վճարում մասերով, որոնց չափերը և վճարման ժամկետները սահմանվում են Պայմանագրում,

• Ապահովագրական սակագին՝ սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ,

• Չհատուցվող գումար՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը,

• Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրում նշված ապահովագրական գումարի սահմաններում Շահառուին վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ

2.1" Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով սահմանված և Պայմանագրում նշված որոշակի ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում ապահովագրական հատուցում վճարել Շահառուին:

2.2" Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, Ապահովադրի կողմից Ապահովագրողի սահմանած ձևով գրավոր դիմում-հարցաթերթիկի հիման վրա (բացառությամբ Կանոնների 2.3 կետում նշված դեպքի), որում պետք է պարունակվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները:

2.3" Պայմանագիրն անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել Ապահովադրի բանավոր դիմումի հիման վրա, պայմանով, որ Պայմանագրում ընդգրկվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ Ապահովագրողի կողմից պահանջվող տեղեկությունները:

2.4" Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին հայտնի իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:

2.5" Պայմանագրի կնքման համար Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը (կամ դրանց պատճենները) և տեղեկությունները՝

- կանոնադրությունը (իրավաբանական անձ Ապահովադրի դեպքում), պետական գրանցման վկայականը և ՀՎՀՀ-ն (իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր Ապահովադրի դեպքում),
- վերջին 3 տարվա ֆինանսական հաշվետվությունները (իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր Ապահովադրի դեպքում),
- գործունեության հասցեն (իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր Ապահովադրի դեպքում),
- իրավաբանական անձի ղեկավարի պաշտոնը և անձը հաստատող փաստաթուղթը,
- ֆիզիկական անձ Ապահովադրի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթը, հաշվառման վայրի հասցեն,
- հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն,
- որակավորման վկայական(ներ)ը (առկայության դեպքում),
- այն պայմանագրի (կամ մրցույթի հրավերի ծածկագիրը) համարը, պայմանագրի նախագիծը, պարտավորության բովանդակությունը (երաշխիքի տրամադրման հիմքը), որի կատարման պետք է կնքվի Պայմանագիրը (տրամադրվի երաշխիք),
- երաշխիքի գումարը և արժույթը, ժամկետը,
- Բենեֆիցիարի տվյալները,
- ապահովագրության օբյեկտի (ապահովագրվող ռիսկի) հետ կապված՝ Ապահովադրի պատվիրատուի, Ապահովադրին ապրանքներ և ծառայություններ մատակարարողների և այլ անձանց հետ կնքված բոլոր պայմանագրերի պատճենները,
- այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք Ապահովագրողն անհրաժեշտ կհամարի՝ ապահովագրական ռիսկը պատշաճ կերպով գնահատելու և պայմանագիրը կնքելու համար:

2.6" Ապահովագրողի պահանջով՝ Պայմանագիրը կարող է կնքվել և (կամ) երաշխիքը տրամադրվել բացառապես Ապահովագրողի համար ընդունելի՝ պարտավորությունների կատարումն ապահովող միջոց(ներ)ից բխող Ապահովագրողի իրավունք(ներ)ի ծագման դեպքում:

2.7" Պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են համաձայնության գալ՝ լրացուցիչ պայմանների և դրույթների ներառման, որոշակի ռիսկերի բացառման վերաբերյալ, ինչի մասին Պայմանագրում կատարվում է համապատասխան նշագրում:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

3.1" Կանոնների համաձայն Ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը, որոնք կապված են Շահառուի (Բենեֆիցիարի) նկատմամբ Ապահովադրի (Պրինցիպալի) պարտավորությունների (օրինակ՝ մրցույթում հաղթելուց հետո համապատասխան պայմանագրի կնքումից հրաժարում, ապրանքների մատակարարում, ծառայությունների մատուցում) խախտման, չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ:

3.2" Ապահովագրության տարածքն այն տարածքն է, որի սահմանների ներսում տեղի ունեցած ապահովագրական պատահարների համար Ապահովագրողը կրում է Կանոններով

նախատեսված պատասխանատվություն: Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրերում ապահովագրության տարածք է համարվում բացառապես Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության վարչական տարածքը:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

4.1" Կանոններով ապահովագրական պատահարներ են համարվում Պայմանագրի գործողության ժամկետում տեղի ունեցած և Պայմանագրով նախատեսված պատահական դեպքը, որի տեղի ունենալու դեպքում ծագում է Շահառուին (Բենեֆիցիարին) ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի (Երաշխիք տված անձի) պարտավորությունը:

4.2" Կանոնների համաձայն ապահովագրական պատահար են համարվում այն իրադարձությունները, որոնք հետևանք են Ապահովադրի (Պրինցիպալի) կողմից Շահառուի (Բենեֆիցիարի) նկատմամբ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, պարտավորությունները կատարելու ընթացքում թույլ տրված սխալի, անփութության կամ բաց թողնման, պայմանով, որ՝

ա) պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը տեղի է ունեցել, վնասը պատճառվել է Պայմանագրի գործողության ընթացքում,

բ) գոյություն ունի պատճառահետևանքային անմիջական կապ հատուցման ենթակա վնասի և պատահարի միջև,

գ) տվյալ պատահարի հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայտը ներկայացվել է օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ԲԱԺԻՆ 5. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ

5.1" Ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրողի կողմից օրենքին, այլ իրավական ակտերին և Պայմանագրին համապատասխան՝ հիմք ընդունելով Շահառուի (Բենեֆիցիարի) դիմումը, ինչպես նաև վնասի պատճառը և/կամ չափը հավաստող՝ համապատասխան լիազորված մարմնի (մարմինների) կողմից հաստատված փաստաթուղթը (փաստաթղթերը), եթե Պայմանագրով այլ բան (փաստաթղթերի այլ կազմ) նախատեսված չէ:

5.2" Երաշխիքով դրամական գումար վճարելու մասին Շահառուի (Բենեֆիցիարի) պահանջը պետք է Ապահովագրողին (երաշխիք տված անձին) ներկայացվի գրավոր՝ կցելով երաշխիքում նշված փաստաթղթերը: Շահառուն (Բենեֆիցիարը) պահանջի կամ դրա հավելվածի մեջ պետք է նշի, թե որն է Ապահովադրի (Պրինցիպալի) կողմից հիմնական պարտավորության խախտումը, որի ապահովման համար տրված է երաշխիքը:

5.3" Շահառուի (Բենեֆիցիարի) պահանջը Ապահովագրողին (Երաշխիք տված անձին) պետք է ներկայացվի մինչև երաշխիքով սահմանված ժամկետի ավարտը, որով այն տրվել է:

5.4" Շահառուն (Բենեֆիցիարը) պարտավոր է պատահարի վերաբերյալ երաշխիքով սահմանված փաստաթղթերը ներկայացնել Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

5.5" Ապահովագրողը կամ նրա կողմից լիազորված անձը կարող են ապահովագրական պատահարի հետ կապված լրացուցիչ տվյալներ հավաքագրել իրավապահ մարմիններից,

պետական կառավարման մարմիններից կամ այլ անձանցից, որոնք տիրապետում են պատահարի առաջացման հանգամանքների մասին տեղեկատվություն:

5.6" Վնասի չափը որոշում է Ապահովագրողն իր կողմից կազմած ապահովագրական հատուցման որոշման և/կամ համապատասխան լիազորված մարմիններից ստացված փաստաթղթերի, ինչպես նաև ապահովագրական պատահարի վերաբերյալ Շահառուի ներկայացրած գրավոր դիմումի հիման վրա, որտեղ նշվում են պատահարի տեղի ունենալու ժամկետը և պատճառները:

5.7" Մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների հետևանքով տրվող ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը: Եթե Պայմանագրի գործողության ընթացքում իրականացվել է ապահովագրության հատուցում ապահովագրական գումարից պակաս չափով, ապա Պայմանագիրը շարունակում է իր գործողությունը՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի և վճարված ապահովագրական հատուցման տարբերության չափով:

5.8" Երաշխիք տված անձը, Բենեֆիցիարի պահանջը՝ դրան կից փաստաթղթերով, պետք է քննարկի երաշխիքում նշված ժամկետում, իսկ դրա բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում, և բարեխիղճ հոգատարություն ցուցաբերի պարզելու համար այդ պահանջի ու դրան կից փաստաթղթերի համապատասխանությունը երաշխիքի պայմաններին:

5.9" Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին երաշխիքում նշված բոլոր

անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո պարտավոր է օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

5.10" Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին որոշումը կայացնելուց հետո հնգօրյա ժամկետում փոստային առաքմամբ կամ էլեկտրոնային եղանակով որոշումն ուղարկվում է Ապահովադրին և Շահառուին:

5.11" Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե երաշխիքով այլ բան նախատեսված չէ:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ ԵՎ ԿԱՐԳ

6"1" Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման մերժելու հիմք են հանդիսանում՝

ա) Շահառուի (Բենեֆիցիարի) կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեությունը, որը որպես այդպիսին է որակված իրավասու պետական մարմինների կողմից,

բ) եթե այդ պահանջը կամ դրան կից փաստաթղթերը չեն համապատասխանում երաշխիքի պայմաններին կամ չեն ներկայացվել սահմանված ժամկետում,

գ) երաշխիք տված անձին պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո,

դ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերը:

6"2" Ապահովագրական հատուցման վճարման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

6"3" Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Շահառուի (Բենեֆիցիարի) նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված պատահարի առաջացման հետ, ինչպես նաև օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:

6"4" Կանոնների սահմանված ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից երաշխիքով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված մեկամսյա ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացնելու դեպքում կամ ներկայացված միջնորդությունը մերժվելու դեպքում Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը՝ սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

6"5" Այն դեպքում, երբ Շահառուն գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև երկու ամիս ժամկետով:

6"6" Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում փոստային առաքմամբ կամ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է Ապահովադրին և Շահառուին:

6"7" Ապահովագրական հատուցման մերժման դեպքում եզրակացության մեջ պետք է նշվեն մերժման պատճառները:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ

7.1. Պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ Կողմեր) համաձայնությամբ ցանկացած ժամկետով:

7.2. Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում:

7.3. Պայմանագրի ժամկետի սկիզբը չի կարող լինել Պայմանագրի կնքման ժամկետից շուտ:

7.4. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Ապահովագրության պայմանագրի ժամկետի լրանալուց հետո,

բ) Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

գ) Բենեֆիցիարի (Շահառուի) կողմից՝ երաշխիքով իր իրավունքներից հրաժարվելու և երաշխիքը երաշխիք տված անձին վերադարձնելու հետևանքով,

դ) Բենեֆիցիարի կողմից՝ երաշխիքով իր իրավունքներից հրաժարվելու հետևանքով, Երաշխիք տված անձին պարտավորություններից ազատելու մասին գրավոր դիմում տալու միջոցով:

ե) Օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

7.5. Եթե երաշխիք տված անձին (Ապահովագրողին) հայտնի է դարձել երաշխիքը դադարելու մասին, ապա այդ մասին նա պետք է անհապաղ տեղեկացնի Պրինցիպալին (Ապահովադրին):

7.6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում վճարված ապահովագրավճարները:

7.7. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել Պայմանագրի դադարեցման այլ պայմաններ:

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

8.1. Ապահովագրական գումարը (երաշխիքի գումարը) սահմանվում է Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

8.2. Կողմերի համաձայնությամբ ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով, իսկ ոչ ռեզիդենտների համար կարող է սահմանվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հրապարակված փոխարժեքով:

8.3. Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի եզրակացությունը կազմելու ամսաթվից: Ապահովագրական հատուցման գումարը ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը: Նախնական ապահովագրական գումարի չափը չվերականգնելու դեպքում Ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հաշվի է առնվում նվազեցված ապահովագրական գումարը:

8.4. Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, Ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերի Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից (երաշխիքի պայմաններից), կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

8.5. Մինչև մեկ տարի ժամկետով կնքվող Պայմանագրի համար Ապահովագրողի կողմից տվյալ ռիսկի համար սահմանած տարեկան ապահովագրական սակագնի նկատմամբ կարող են կիրառվել Ընկերության կողմից սահմանված կարգավորիչ գործակիցներ:

8.6. Ապահովադիրը ապահովագրավճարը պետք է վճարի միանվագ՝ ամբողջ Ապահովագրության ժամկետի համար՝ ապահովագրության պայմանագրի կնքման պահին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

8.7. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել անկանխիկ՝ Ապահովագրողի կամ ապահովագրական գործակալի համապատասխան հաշվարկային հաշվին կամ կանխիկ կերպով՝ ապահովագրական գործակալին:

8.8. Ապահովագրավճարի վճարման ամսաթիվ է համարվում ապահովագրավճարի վճարման՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:

8.9. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝ Պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

8.10. Պայմանագրով սահմանված ժամկետում Ապահովադրի կողմից ապահովագրավճարը չվճարելու դեպքում Պայմանագիրը ուժի մեջ մտնել չի կարող: Ապահովադիրն իրավունքի չունի որևէ հիմքով պահանջել ապահովագրավճարի չափի նվազեցում:

ԲԱԺԻՆ 9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1. **Ապահովադիրը (Պրինցիպալը) իրավունք ունի՝**

ա) Ծանոթանալ ապահովագրության պայմաններին,

բ) Պայմանագրի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը: Պայմանագրի գործողության ընթացքում, Պայմանագրի կրկնօրինակի կորստի դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից գանձել Պայմանագրի պատրաստման համար կատարված ծախսին համարժեք գումար:

9.2. **Ապահովադիրը (Պրինցիպալը) պարտավոր է՝**

ա) Պայմանագրում նշված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,

բ) Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին գրավոր տեղեկություններ հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին, ինչպես նաև տվյալ ապահովագրության օբյեկտի գծով կնքված և կնքվող բոլոր ապահովագրության պայմանագրերի մասին՝ ապահովագրության դիմում-հարցաթերթիկում նշելով ռիսկերը, ապահովագրական գումարները, ապահովագրության պայմանագրերի համարները և դրանց գործողության ժամկետները,

գ) յուրաքանչյուր ամիս Ապահովագրողին տեղեկացնել հիմնական պարտավորության կատարման ընթացքի մասին,

դ) Ապահովագրողի պահանջով Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովել Ապահովագրողի համար ընդունելի ապահովման միջոցներով, իսկ վերջինների արժեզրկման կամ արժեզրկման վտանգ առաջանալու դեպքում Ապահովագրողի պահանջով վերջինի օգտին ձևակերպել համարժեք ապահովման միջոցներ,

ե) անմիջապես տեղեկացնել Ապահովագրողին Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների ցանկացած խախտման ինչպես նաև Երաշխիքի տրամադրման հանգամանքների էական փոփոխությունների մասին,

զ) աջակցել Ապահովագրողի լիազորված անձանց նրանց կողմից ընտրված ժամկետներում իր մոտ մոնիտորինգի, այդ թվում բիզնեսը/գրավի առարկան լուսանկարահանելու/տեսանկարահանելու, ֆինանսական փաստաթղթերին ծանոթանալու, ինչպես նաև ապրանքանյութական միջոցների հաշվարկի աշխատանքների անխոչընդոտ և արդյունավետ իրականացմանը,

է) բացահայտել պարտավորությունների մարման աղբյուրները, ինչպես նաև Ապահովագրողի պահանջով ողջամիտ ժամկետում վերջինիս տրամադրել իր պայմանագրային պարտավորությունների կատարման, ներառյալ՝ պատշաճ կատարման հնարավորության, ինչպես նաև հիմնական պարտավորության կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու և երաշխիքի տրամադրման հանգամանքների էական փոփոխությունների բացահայտման համար բոլոր անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը, ներառյալ՝ իր հաշվապահական, ֆինանսական և այլ հաշվետվություններն ու տեղեկությունները,

ը) անհրաժեշտության դեպքում Ապահովագրողին ներկայացնել պատահարի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք հնարավորություն կտան պարզել պատահարի պատճառներն ու վնասի չափը,

թ) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ

9.3. **Ապահովագրողը (Երաշխիք տված անձը) իրավունք ունի՝**

ա) ուսումնասիրել Ապահովագրության օբյեկտը և անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին,

բ) իր լիազորված անձանց միջոցով փաստաթղթային կամ անմիջականորեն կամ մոնիտորինգի իրականացման միջոցով ստուգել Պրինցիպալի կողմից հիմնական պարտավորության կատարումը,

գ) հետադարձ կարգով Պրինցիպալից պահանջել երաշխիքով Բենեֆիցիարին վճարված գումարները,

դ) իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

9.4. **Ապահովագրողը (Երաշխիք տված անձը) պարտավոր է՝**

ա) Ապահովադրին ծանոթացնել Ապահովագրության պայմաններին, Ապահովադրի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,

գ) ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Շահառուի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո պարզել դրանց համապատասխանությունը երաշխիքի պայմաններին և կատարել ապահովագրական հատուցում կամ մերժել այն,

դ) չհրապարակել Ապահովադրի և Շահառուի բանկային, ապահովագրական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները,

ե) տրամադրված երաշխիքը Բենեֆիցիարին հանձնելու համար տալ Պրինցիպալին կամ անմիջապես փոխանցել Բենեֆիցիարին,

9.5. Շահառուի պահանջը ստանալուց հետո այդ մասին անհապաղ տեղեկացնել Ապահովադրին և վերջինին հանձնել պահանջի պատճենը՝ դրան վերաբերող բոլոր փաստաթղթերով: Բենեֆիցիարի առջև երաշխիքով նախատեսված Ապահովագրողի պարտավորությունը սահմանափակվում է այն գումարով, որով տրված է երաշխիքը:

9.6. Երաշխիք տված անձի կողմից երաշխիքով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Երաշխիք տված անձի պատասխանատվությունը Բենեֆիցիարի առջև սահմանափակվում է այն գումարով, որով տրված է երաշխիքը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով:

9.7. Ապահովադիրն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 10. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

10.1. Պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար:

ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

10.2. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

10.3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, պատճառված վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

10.4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔ

11.1. Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագրով (երաշխիքով) Շահառուին (Բենեֆիցիարին) վճարած գումարները, ներառյալ՝ երաշխիքի պայմաններին չհամապատասխանող կամ Բենեֆիցիարի առաջ Ապահովագրողի պարտավորության խախտմամբ Բենեֆիցիարին վճարված գումարները, հետադարձ կարգով պահանջել Ապահովադրից (Պրինցիպալից):

11.2. Ապահովադիրը (Պրինցիպալը) պարտավոր է Կանոնների 11.1-րդ կետով սահմանված պահանջի օրվանից 1 (մեկ) ամսվա ընթացքում Ապահովագրողին վճարել վերջինի կողմից Շահառուին (Բենեֆիցիարին) վճարված գումարները:

ԲԱԺԻՆ 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

12.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Պայմանագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելքների:

12.2. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 13. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

13.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝

ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

13.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ձայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

13.3. Կետ 13.1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

13.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի

(Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

13.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 13"1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

14.1. Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

14.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

14.3. Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ դատարաններում: